ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2016թ. **N---Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.69՝ 70.2 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N11112015-01-0228 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռադիկ Գաբրիելյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան համայքի սեփականություն հանդիսացող Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.69՝ 70.2 քմ մակերեսով բնակարանը նվիրել ՀՀ վաստակավոր արտիստ՝ Ռադիկ Գաբրիելյանին։

Ռադիկ Գաբրիելյանը ծնվել է 1956 թվականի հոկտեմբերի 21-ին, Երևանում։

Սովորել է Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, այնուհետև՝ 1977թ. ընդունվել է «Հայհամերգ» էստրադային միավորման «Էրեբունի» վոկալ-գործիքային անսամբլ, որպես՝ երգիչ-երաժիշտ: Մոսկվայում մասնակցել է «Բուդելնիկ» հաղորդմանը՝ որպես երաժիշտ:

Հետագայում, 1978-82թթ. սովորել և աշխատել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին կից դրամատիկական ստուդիայում՝ որպես դերասան։ Այնուհետև, աշխատել և դասավանդել է նույն թատրոնում: Աշխատել է նաև Կոնստանտին Օրբելյանի ղեկավարած Հայաստանի պետական էստրադային նվագախմբում, 1995-99թթ. եղել է «Հայեր» համույթի երաժիշտ և երգիչ: Ռադիկ Գաբրիելյանը 1999թ.-ից աշխատել է Հայաստանի պետական ջազային նվագախմբում։ Համագործակցել է երևանյան բազմաթիվ երաժշտական ակումբների հետ, նկարահանվել է բազմաթիվ ֆիլմերում և հեռուստասերիալներում: Թողարկել է «Like the wind» (2009թ.) ձայնասկավառակը:

Սիրված երաժիշտ Ռադիկ Գաբրիելյանը կնոջ հետ համատեղ բնակվում է Արզումանյան փողոցի հ.8ա շենքի հ.26 մեկ սենյականոց փոքր բնակելի տարածք զբաղեցնող կիսաքանդ բնակարանում՝ զրկված լինելով ապրելու և ստեղծագործելու տարրական պայմաններից։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 29.09.2016թ. ՆԼԱ-2/7831 տվյալների համաձայն՝ Ռադիկ Գաբրիելյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված է Արզումանյան փողոցի հ.8ա շենքի հ.26 բնակարան հասցեով անշարժ և վերջին հինգ տարվա ընթացքում վերջինիս կողմից անշարժ գույքի օտարում և գրանցում չի կատարվել:

Հաշվի առնելով Ռադիկ Գաբրիելյանի անցած ստեղծագործական ուղին, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու որոշման այս նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ